

5.4. 2014 թվականի հուլիս ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հուլիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր 0.5-1 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 0.5-1.5 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ 1.5-3 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ նորմայի սահմաններում (առանձին վայրերում՝ մի փոքր բացասական շեղումներով):

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և դրա նախալեռներում կազմել է +34 +35°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում՝ +28 +32°C, ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Սյունիքի նախալեռներում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +23 +27°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հուլիսի 18-ին և 25-ին: Արենի գյուղում (ՀՀ Վայոց ձորի մարզ) գրանցվել է +39.7°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +38 +39°C (ք.Կապանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ +34°C), Արագածոտնի նախալեռներում՝ +34 +36°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +30 +32°C, ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +27 +33°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի մարզում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է +10 +12°C, ՀՀ Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Սյունիքի նախալեռներում՝ +12 +14°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ +9°C), ՀՀ Տավուշի մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ +16 +19°C (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ +13°C), Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +20 +22°C (ք.Կապանում՝ +17°C):

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հուլիսի 9-ին: ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում գրանցվել է +6 +9°C (ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ +5°C, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ +7°C), ՀՀ Կոտայքի մարզում՝ +10 +11°C, Սյունիքի նախալեռներում՝ +12 +13°C, ՀՀ Տավուշի մարզում, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +14 +17°C:

Ողջ ամսվա ընթացքում հանրապետությունում դիտվել է անձրև և ամպրոպ (միայն հուլիսի 3-5-ին, 16-19-ին, 24-25-ին և 30-ին դիտվել է առանց տեղումների եղանակ): Ամսական տեղումների քանակը եղել է նորմայից բարձր: Սյունիքի հովիտներում այն կազմել է նորմայի 145-190%-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 114-140%, ՀՀ Շիրակի մարզում՝ 103-130%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 96-105%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 93-104%, Սյունիքի նախալեռներում՝ 80-90%, ՀՀ Լոռու մարզում՝ 70-80% (ք.Ստեփանավանում՝ 172%), ՀՀ Տավուշի մարզում՝ 58-70% և Արարատյան դաշտավայրում՝ 40-64%:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Հուլիսի 6-10-ին և 20-ին առանձին շրջաններում, 2-5-ին, 12-19-ին և 22-30-ին ք.Երևանում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 8-13 մ/վրկ, պոռթկումները՝ 17-24 մ/վրկ:

Ամսվա ընթացքում առանձին օրեր առանձին վայրերում դիտվել է կարկուտ 3-17 մմ տրամագծով: Ք. Ապարանում դիտվել է ուժեղ անձրև՝ 45 մմ/5 ժամ:

Ջրի միջին ամսական ելքերը հանրապետության գետերում հիմնականում եղել են նորմայից ցածր և գետերի մեծ մասում դրանք կազմել են նորմայի 50-70%-ը, առանձին դիտակետերում (գետ Պաղջուր (դիտակետ՝ Գետահովիտ), գետ Գավառագետ (Նորատուս), գետ Վեղի (Ուրցաձոր), գետ Արփա (Եղեգնաձոր և Արենի))՝ 90-100%, իսկ որոշ դիտակետերում (գետ Տաշիր (Սարատովկա), գետ Հախում (Ծաղկավան), գետ Ախուրյան (Ամասիա), գետ Սևջուր (Էջմիածին), գետ Գեղարոտ (Արագած), գետ Ձկնագետ (Ծովազյուղ), գետ Մարտունի (Գեղհովիտ), գետ Եղեգիս (Հերմոնե), գետ Ողջի (Կապան) և գետ Ծղուկ (Ծղուկ))՝ 20-40%:

Հուլիսի 31-ի դրությամբ ջրի լցվածությունն (ծավալ) Ախուրյանի ջրամբարում կազմել է 70.5 մլն. խոր. մ, Արփիլճի ջրամբարում՝ 31.3 մլն. խոր. մ, Ագատի ջրամբարում՝ 20.4 մլն. խոր. մ և Ապարանի ջրամբարում՝ 14.7 մլն. խոր. մ:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում իջել է 5 սմ-ով և հուլիսի 31-ի դրությամբ կազմել 1 900.45 մ, որը 2013թ. նույն օրվա համեմատ ցածր է 8 սմ-ով: Ամսվա ընթացքում Սևանա լճից բաց թողնված ջրի քանակը կազմել է 81.062 մլն. խոր. մ: